

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱՔԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՔԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

I. Առկա իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Ժողովրդավարության ամրապնդման գործում առանցքային նշանակություն ունի ժողովրդավարական ինստիտուտների, մասնավորապես՝ ընտրական համակարգի շարունակական բարելավումը: Ընտրական օրենսդրությունը բարեփոխելու

Նախաձեռնությունը Հայաստանի Հանրապետությունում սկիզբ է առել դեռևս 2018 թվականի ժողովրդավարական գործընթացների ընթացքում, որի արդյունքում մշակվեց Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք) փոփոխությունների նախագիծը: Ընտրական օրենսդրության բարելավման քաղաքականությունը շարունակվեց նաև հետագայում: Այն ամրագրվեց ՀՀ Կառավարության՝ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի՝ «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշմամբ¹: Արդյունքում 2021թ. ապրիլի 1-ին Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններով անցում կատարվեց մաքուր համամասնական ընտրակարգի, հաջորդ փուլով՝ 2021թ. ապրիլի 28-ին Քրեական օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում նախատեսվեցին ընտրական օրենսդրության խախտման համար պատասխանատվություն նախատեսող մի շարք նորմեր: Իսկ ավելի ուշ՝ 2021 մայիսի 7-ին, Ընտրական օրենսգրքում և հարակից օրենքներում կատարված մեծածավալ փոփոխություններով ընտրական օրենսդրությունը ենթարկվեց էական բարեփոխման:

Ընտրական օրենսդրությունը բարեփոխելու անհրաժեշտությունը վերահաստատվեց նաև Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների՝ 2022-2026 թվականների ռազմավարությամբ, որը նախատեսում է մինչև 2023թ. 1-ին կիսամյակը մշակել ընտրական օրենսդրության փոփոխություններ նախատեսող իրավական ակտերի նախագծերի փաթեթ՝ հիմք ընդունելով 2018-2021թթ. կատարված ընտրական բարեփոխումների վերաբերյալ միջազգային կառույցների դիրքորոշումը, ինչպես նաև 2021թ. տեղի ունեցած Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում գույքագրված խնդիրները:

2021 թվականի հունիսի 20-ին կայացած Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների և 2021-2022թթ. համամասնական ընտրակարգով անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում ծագել են բազմաթիվ խնդիրներ, որոնք արձանագրվել են ինչպես իրավակիրառ մարմինների, այնպես էլ դիտորդական առաքելություն իրականացրած տեղական և միջազգային կազմակերպությունների և ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերի կողմից:

¹ Տես՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ներկայացված նախագծով ու վերջինիս կից ներկայացված նախագծերի փաթեթով լուծել ի հայտ եկած խնդիրները:

➤ Թեև նախորդիվ տեղի ունեցած ընտրությունների անցկացման համար մատչելիությանն ուղղված տարբեր միջոցառումներ են իրականացվել, բայց, տեղամասային կենտրոնների մեծ մասը դեռևս մատչելի չեն հաշմանդամություն կամ տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց համար: Ընտրական օրենսդրությամբ բավարար իրավական երաշխիքների ընդլայնումը խթան կհանդիսանար պետության կողմից հաշմանդամություն և տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց ընտրական իրավունքի իրականացման նպատակով անհրաժեշտ համալիր միջոցառումներ իրականացնելու համար:

➤ Ներկայումս Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմում իրակա-նացվում է քաղաքացիական ծառայություն և սահմանված չեն առանձնահատկություններ: Այսպիսով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, լինելով անկախ սահմանադրական մարմին, պետք է ունենա աշխատակազմի ձևավորման օրենքով սահմանված այնպիսի առանձնահատկություններ, որոնք կերաշխավորեն վերջինիս ինքնուրույնությունն քաղաքական իշխանությունից:

➤ Սահմանադրությունը, ինչպես նաև Ընտրական օրենսգիրքը արգելում են ընտրությունների նշանակումն ու անցկացումն արտակարգ և ռազմական դրության պայմաններում: Օրենքով կարգավորված չեն այն դեպքերը, երբ ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվում է ընտրություններ նշանակվելուց հետո կամ քվեարկության օրվանից հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, ինչպես նաև հստակ չէ ընտրական գործընթացի ընթացքի կարգավորումը ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո:

➤ Համամասնական ընտրակարգով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամները մասնավոր բանկերում ձևավորելու պրակտիկան ցույց տվեց, որ նախընտրական հիմնադրամների կառավարման և ֆինանսական վերահսկողության ու թափանցիկության ապահովման, ինչպես նաև օրենսդրության

միատեսակ կիրառումն ապահովելու տեսանկյունից բազմաթիվ, այդ թվում նաև օբյեկտիվ, խնդիրներ ի հայտ եկան:

➤ Ընտրական օրենսգրքի 2021 թվականի բարեփոխումներով առաջարկվեց ընտրությունների ֆինանսական վերահսկողության գործառույթը վերապահել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Անցած ժամանակաշրջանի փորձը և ուսումնասիրությունները վկայում են, որ այս մոտեցման իրագործումը կարող է լրջագույն խնդիրներ ստեղծել՝ այդ թվում անկանխատեսելի: Միևնույն ժամանակ միջազգային փորձագետները («Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովն իր 20.06.2011 թվականի թիվ CDL-AD(2011)020 կարծիք²) արձանագրել են, որ ընտրական գործընթացների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը պետք է օժտված լինի բավարար անկախությամբ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որպես Սահմանադրությամբ նախատեսված անկախ մարմին օժտված է Սահմանադրությամբ երաշխավորված անկախությամբ:

➤ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանադրական կարգավիճակով օժտված անկախ պետական մարմին է: Սահմանադրության 194-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:

2. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով իր գործունեության մասին:

4. Ընտրական հանձնաժողովների համակարգը, ընտրական հանձնաժողովների լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը, գործունեության երաշխիքները սահմանվում են Ընտրական օրենսգրքով:»:

Նման կարգավիճակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ձեռք է բերել 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում:

2015 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխություններով նախատեսված կանոնակարգումներին համապատասխան՝ 2016 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանվեցին Կենտրոնական ընտրական

² Տես՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2011\)020-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2011)020-e):

հանձնաժողովի անկախության մի շարք երաշխիքներ, որոնք արտացոլվեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորման կարգի, ընտրական հանձնաժողովների ֆինանսավորման, ընտրական հանձնաժողովների անդամների վարձատրության, ընտրական հանձնաժողովների անդամների կարգավիճակի վերաբերյալ դրույթներում:

Անկախ ընտրական մարմինների (ընտրական հանձնաժողովների) կողմից ընտրությունների անցկացման պահանջը ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներից է:

Ընտրությունների օրենսդրական դաշտի վերլուծության վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաջարկությունների VI բաժնում նշված է. «Անկախ ձևավորման եղանակից և սեփական համոզմունքներից՝ ընտրական հանձնաժողովները պետք է աշխատեն անկախ, կոլեգիալ և անաչառ: Ձևավորման իսկ պահից ընտրական հանձնաժողովները պետք է ծառայեն բոլոր քաղաքացիների և ընտրական գործընթացի մասնակիցների շահերին: Որևէ ընտրական մարմին իր պարտականությունները կատարելիս չպետք է ցուցադրի ընտրովի մոտեցում:»³:

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված է.

«1. Ընտրությունների նախապատրաստումը և անցկացումը, քաղաքացիների ընտրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը, դրանց պահպանման նկատմամբ վերահսկողությունը դրվում է ընտրական մարմինների (ընտրական հանձնաժողովների) վրա, որոնց կարգավիճակը, իրավասությունները և լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, օրենսդրական այլ ակտերով:

2. Չի թույլատրվում այլ համակարգերի (մարմինների, կազմակերպությունների) ստեղծումը և գործունեությունը, որոնք փոխարինում են ընտրական մարմիններին կամ ամբողջապես կամ մասամբ իրականացնում են նրանց գործառույթները կամ խոչընդոտում են նրանց օրինական գործունեությանը կամ ապօրինաբար միջամտում են նրանց գործունեությանը կամ յուրացնում են նրանց կարգավիճակը և լիազորությունները:»⁴:

Միաժամանակ, ընտրական հանձնաժողովների անկախության բաղադրիչ է դիտվում ընտրական հանձնաժողովների աշխատակազմն ինքնուրույն և անկախ ձևավորելու, նրա գործունեության կարգը սահմանելու լիազորությամբ օժտված լինելը: Ընտրական

³ Տես՝ <https://www.osce.org/files/f/documents/3/9/383718.pdf>:

⁴ Տես՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24616>:

հանձնաժողովների կամ ընտրությունները կազմակերպող մարմինների լայն իմաստով անկախության հարցերին բազմիցս անդրադարձ են կատարել և կատարում գիտնականները:

Այսպես, պրոֆեսոր Ն. Չիզմանը և Է. Յորգենն ընտրական հանձնաժողովների անկախությանը նվիրված իրենց հետազոտությունում նշում են, որ «հանձնաժողովականների ընտրության և քարտուղարության ձևավորման կարգը և նրանց պաշտոնավարման անվտանգությունը կարևոր դեր է խաղում քաղաքական ճնշումներին դիմակայելու գործում հանձնաժողովի կարողության ձևավորման հարցում»: Մինևույն ժամանակ նշում են, որ թեև այս ոլորտում հիմնական ուշադրությունը կենտրոնանում են հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի անդամների վրա, սակայն «Գործադիր տնօրենի և քարտուղարության նշանակման գործընթացը նույնպես կարևոր է՝ ապահովելու համար, որ հանձնաժողովականները լինեն լիովին կազմակերպության վերահսկողության ներքո»: Հեղինակները բարձրաձայնում են նաև ընտրական հանձնաժողովներում վարձատրության, աշխատակիցների հավաքագրման և նրան աշխատանքները վերահսկելու հնարավորությունների մասին՝ դիտելով նշվածները որպես անկախության երաշխիքներ⁵:

International IDEA հեղինակավոր կազմակերպության հրատարակությամբ Օ. Ջոզեֆի կողմից ներկայացված հետազոտության մեջ նշվում է. «Անձնակազմի պահանջների որոշումը, ինչպես նաև այն պայմանները, որոնց դեպքում անձնակազմը հավաքագրվում և ազատվում է աշխատանքից, ինչպես նաև գործուղված անձնակազմի հավաքագրման վրա անկախ վերահսկողություն ունենալը ընտրությունները կազմակերպող մարմինների անկախության անբաժանելի մասն է: Աշխատակազմի հավաքագրման և վարձատրության քաղաքականությունը, որը պաշտոնապես առանձնացված է պետական քաղաքացիական ծառայության քաղաքականությունից, ծառայում է անձնակազմին քաղաքական հովանավորությունից պաշտպանելուն: Ընտրությունները կազմակերպող մարմիններում անկողմնակալության պահպանումը կախված կլինի նրա անձնակազմի գործադիր իշխանությունից անկախությունից: Ընտրությունները կազմակերպող մարմինների մեծամասնությունն ունեն մշտական անձնակազմ, որն ապահովում է իրենց մանդատի

⁵ Տես՝ **Nic Cheeseman**, Professor of Democracy at the University of Birmingham, UK, and **Jørgen Elklit**, Professor Emeritus of Political Science at Aarhus University, Denmark. “Understanding and Assessing Electoral Commission Independence: a New Framework”, product of Westminster Foundation for Democracy (WFD), 2020, p. 11 // Աղբյուրը՝ <https://www.wfd.org/what-we-do/resources/understanding-and-assessing-electoral-commission-independence>:

ներքո գործող շարունակական գործողությունները, որոնք տեղի են ունենում ընտրական գործընթացներում: Ընտրությունները կազմակերպող մարմինները նաև հիմնվում են բազմաթիվ ժամանակավոր աշխատողների վրա՝ ընտրությունների օրը և դրա շուրջ՝ աջակցելու ընտրատեղամասում քվեարկության կազմակերպմանը և ընտրողների գրանցման ակտիվ համակարգ ունեցող երկրներում ընտրողների գրանցմանը:»⁶:

Ընտրական մարմինների անկախության երաշխավորման տեսանկյունից ինքնուրույն աշխատակազմ ձևավորելու փորձ կա նաև արտասահմանյան երկրներում: Այսպես,

Ղրղզստանի Հանրապետության 2021 թվականի հունիսի 26-ի օրենքը «Ղրղզստանի Հանրապետության ընտրությունների և հանրաքվեների անցկացման կենտրոնական հանձնաժողովի մասին» սահմանում է.

«1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեությունն իրականացվու է կոլեգիալ, հրապարակայնորեն և բաց՝ ազատ քննարկման և իր լիազորությունների շրջանակներում հարցերի լուծման հիման վրա:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասում է սկսել աշխատանքը, եթե իր կազմը կազմավորված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների սահմանված թվի առնվազն 2/3-ի չափով:

3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության ներքին կազմակերպման հարցերը սահմանվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնակարգով» (հոդված 5)⁷:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության կազմակերպամեթոդական, տեղեկատվական-վերլուծական, նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմը:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարումն իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր տարածքային ընտրական հանձնաժողովում ունի մշտական հատուկ ներկայացուցիչ և համակարգային ադմինիստրատոր (системный администратор), որոնք իրականացնում են տարածքային ընտրական հանձնաժողովի գործունեության համակարգումը, կազմակերպամեթոդական և

⁶ Տես՝ **Joseph O.** Independence in Electoral Management Electoral Processes Primer 1. International IDEA, 2021, p. 34. // Աղբյուրը՝ <https://www.idea.int/sites/default/files/publications/independence-in-electoral-management.pdf>:

⁷ Տես՝ <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/112260>:

նյութատեխնիկական ապահովումը, ինչպես նաև ընտրողների, հանրաքվեի մասնակիցների ցուցակների վարումը, թարմացումն ու հստակեցումը:

4. Հատուկ ներկայացուցիչն ու համակարգային ադմինիստրատորը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցներ են, որոնք պաշտոնի են նշանակվում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից: Տարածքային ընտրական հանձնաժողովի հատուկ ներկայացուցիչի և համակարգային ադմինիստրատորի գործունեության կարգը հաստատվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ:

5. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցները պետական քաղաքացիական ծառայողներ են:

6. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի կազմակերպական կառուցվածքը և հաստիքային քանակը որոշվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից:

7. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչպես նաև պետական քաղաքացիական ծառայության անցման պայմանները սահմանվում են Ղրղըզստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի հաստատած ծառայողական հրահանգներով:»:

Վրաստանի Ընտրական օրենսգրքի 7-րդ հոդվածի 5-դ մասի համաձայն՝ «1. Վրաստանի ընտրական վարչարարությունը անկախ վարչական մարմինների համակարգ է, որը իր լիազորությունների շրջանակներում անկախ է այլ պետական մարմիններից և պետք է ստեղծվի սահմանված սույն օրենքի համաձայն: Սույն օրենքով սահմանվում են Վրաստանի ընտրական վարչարարության համակարգի ստեղծման իրավասություններն ու ընթացակարգերը:

2. Վրաստանի ընտրական վարչարարությունը կազմված է.

ա) ԿԸՀ-ից և նրա աշխատակազմից.

բ) Աջարիայի բարձրագույն ընտրական հանձնաժողովից և նրա աշխատակազմից.

գ) ԸԸՀ-ներից.

դ) ՏԸՀ-ներից:

3. ԿԸՀ-ն Վրաստանի ընտրական վարչարարության համակարգի բարձրագույն մարմինն է, որն իր լիազորությունների շրջանակներում կառավարում և վերահսկում է բոլոր մակարդակներում ընտրական հանձնաժողովների գործունեությունը և ապահովում ընտրական օրենսդրության միասնական կիրառումը Վրաստանի ողջ տարածքում:

4. Եթե միաժամանակ անցկացվեն համընդհանուր ընտրություններ և Աջարիայի Գերագույն խորհրդի ընտրություններ, ապա ընդհանուր ընտրությունների համար ստեղծված ԸԸՀ-ները և ՏԸՀ-ները կատարում են ԸԸՀ-ների և ՏԸՀ-ների պարտականությունները:

5. ԿԸՀ-ի և ԿԸՀ-ի աշխատակազմը (բացառությամբ աշխատանքային պայմանագրերով ընդունված անձանց) հանրային ծառայողներ են և նրանց վրա տարածվում է «Հանրային ծառայության մասին» Վրաստանի օրենքը:»:

Վրաստանի Ընտրական օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-դ մասի համաձայն՝ «Ղեկավար անձանց և ԿԸՀ, ԸԸՀ և ՏԸՀ անդամների և ԿԸՀ աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձի չափը սահմանում է ԿԸՀ-ն՝ ԿԸՀ-ի, ԸԸՀ-ների և ՏԸՀ-ների ղեկավարների և անդամների, ինչպես նաև ԿԸՀ աշխատակազմի անդամների վարձատրության չափը սահմանում է ԿԸՀ-ն՝ համաձայն «Հանրային հիմնարկներում վարձատրության մասին» Վրաստանի օրենքի»:

Նույն օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝ «1. ԿԸՀ աշխատակազմն ապահովում է ընտրությունների և հանրաքվեների կազմակերպչական, իրավական և տեխնիկական ապահովումը:

2. ԿԸՀ կանոնակարգով սահմանվում են ԿԸՀ աշխատակազմի կառուցվածքը, գործունեության կանոնները և լիազորությունները:

3. Ընտրական վարչակազմի աշխատակիցը (բացառությամբ կուսակցության կողմից սույն օրենքով սահմանված կարգով նշանակված հանձնաժողովի անդամների) կուսակցական գործունեությանը սահմանափակ ներգրավվածություն ունի:

4. Եթե սույն հոդվածով այլ բան նախատեսված չէ, անձը չի կարող աշխատանքի ընդունվել որպես ԿԸՀ աշխատակազմի անդամ, եթե չունի հանրային ծառայողի վկայական և ԿԸՀ-ի կողմից տրված ընտրական կառավարման ծառայողի վկայական, բացառությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող անձի:

5. ԿԸՀ-ն հրամանագրով կազմում է հաստիքացուցակում ընդգրկված այն գերատեսչությունների և աշխատողների ցանկը, որոնց գործունեությունը ուղղակիորեն կապված չէ ընտրական ընթացակարգերի հետ և պարտավոր չէ ունենալ ԿԸՀ-ի կողմից

տրված ընտրական կառավարման ծառայողի վկայական: Հանրային ծառայողի վկայականը չի պահանջվում այն անձի համար, ով համապատասխանում է «Հանրային ծառայության մասին» Վրաստանի օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին»⁸:

«Հանրային ծառայության մասին» Վրաստանի օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ «Թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթներին մասնակցելիս վկայական չի պահանջվում հետևյալ ծառայողների համար.

ա) գործող ծառայողների,

բ) նախկին ծառայողների:»⁹:

Ուկրաինայի Հանրապետության 2004 թվականի հունիսի 30-ի օրենքը «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մասին» սահմանում է.

«1. Հանձնաժողովի գործունեության ապահովումն իր լիազորությունների իրականացման ընթացքում, այդ թվում՝ որպես ընտրողների պետական ռեգիստրի կառավարիչ, վստահված է Հանձնաժողովի քարտուղարությանը: Հանձնաժողովի քարտուղարությունն իրականացնում է կազմակերպչական, իրավական, փորձագիտական, վերլուծական, տեղեկատվական, տեղեկատու և նյութատեխնիկական աշխատանքներ՝ Հանձնաժողովի և նրա անդամների կողմից սույն օրենքով նախատեսված լիազորությունների իրականացումն ապահովելու նպատակով:

2. Հանձնաժողովի քարտուղարության կառուցվածքի, հաստիքացուցակի և դրանցում փոփոխություններ կատարելու կանոնակարգը հաստատում է Հանձնաժողովը՝ Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ:

3. Հանձնաժողովի քարտուղարության, Հանձնաժողովի շրջանային և տարածքային ներկայացուցիչները և մյուս աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ են, բացառությամբ հովանավորչական ծառայության (патронатной службы) և այն աշխատողների, ովքեր «Քաղաքացիական ծառայության մասին» Ուկրաինայի օրենքին համապատասխան կատարում են սպասարկման գործառույթներ: (...)» (հոդված 33)¹⁰:

Կոսովոյի ընտրությունների մասին օրենքը, որը կոչվում է Law No. 03 L-073 on General Elections in the Republic of Kosovo, իր 66-րդ հոդվածի 1-2-րդ մասերում սահմանում է ԿԸՀ քարտուղարության մասին՝ համաձայն որի՝ «Քարտուղարությունը ղեկավարում են գլխավոր

⁸ Տես՝ <https://matsne.gov.ge/en/document/view/1557168?publication=69>:

⁹ Տես՝ <https://matsne.gov.ge/en/document/download/3031098/1/en/pdf> :

¹⁰ Տես՝ <https://zakon.rada.gov.ua/laws/show/1932-15/print1443087113377542#Text>:

գործադիր տնօրենը և գործադիր տնօրենի տեղակալը, որոնք երկուսն էլ նշանակվում են ԿԸՀ-ի կողմից: Գործադիր տնօրենը անմիջականորեն հաշվետու է ԿԸՀ-ին:

Գրասենյակի գլխավոր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի և գրասենյակի գործադիր տնօրենի նշանակման ժամկետները պետք է համապատասխանեն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքին և կարող են երկարաձգվել: ԿԸՀ-ն կարող է ցանկացած պահի պաշտոնանկ անել գործադիր տնօրենին, գործադիր տնօրենի տեղակալին կամ գրասենյակի գործադիր տնօրենին՝ կիրառելի ընթացակարգերին համապատասխան:»:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Քարտուղարության աշխատակազմը ընտրվում և աշխատանքի է ընդունվում քարտուղարության գործադիր տնօրենի կողմից՝ Կոսովոյի կառավարության կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան:»¹¹:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղարության աշխատատեղերի ներքին կազմակերպման և համակարգման կանոնակարգի 31-րդ հոդվածով սահմանված է. «1. Քարտուղարության աշխատակիցները քաղաքացիական ծառայության մաս են կազմում: «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված վարչական անձնակազմի կարգավիճակը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ դա չի շոշափում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Սահմանադրությամբ և Քաղաքացիական ծառայության մասին օրենքի 3.7-րդ հոդվածով երաշխավորված անկախությունը:

2.Քարտուղարության աշխատակազմի հավաքագրումը, առաջխաղացումները և փոխադրումները կատարվում են ԿԸՀ-ի ներքին ընթացակարգերին համապատասխան՝ օրենքով սահմանված կարգով, քանի դեռ դրանք չեն խախտում ԿԸՀ սահմանադրական անկախությունը՝ համաձայն LSHCK-ի 3.7-րդ հոդվածի և սահմանադրական դատարանի N. K073/2016 վճռի:

3. Աշխատանքի կոնկրետ պայմանները, աշխատաժամանակը, աշխատավարձը, աշխատավարձի բարձրացումը, արձակուրդները, ինչպես նաև վարքագծի կանոնները կարգավորվում են ԿԸՀ-ի հատուկ ակտերով՝ գործադիր տնօրենի առաջարկությամբ:

4. «Հատուկ ծառայությունների համար պայմանագրեր» կոչվող պայմանագրերի հիման վրա ընտրությունների անցկացման գործընթացում հատուկ ծառայություններ կատարելու համար աշխատակիցները ներգրավվում են պայմանագրերով, որոնց համար կիրառվում է

¹¹Տես՝ https://kqz-ks.org/wp-content/uploads/2017/12/LAW_NO_03_L-073_ON_GENERAL_ELECTIONS_IN_THE_REPUBLIC_OF_KOSOVO.pdf:

հավաքագրման պարզեցված ընթացակարգ: Վեց ամսից պակաս ժամկետով կատարված նշանակումները կարգավորվում են «Պարտականությունների մասին» օրենքով:¹²

Կանոնակարգում նաև սահմանված է, որ ժամանակավոր աշխատողների ներգրավումն իրականացվում է քարտուղարության գործադիր տնօրենի կողմից՝ հաշվի առնելով քարտուղարության ստորաբաժանումների, բաժինների առաջարկություններն ու հարցումները¹³:

Վերոգրյալի ամփոփմամբ կարելի է եզրակացնել, որ ընտրական մարմինների անկախության երաշխիքներից է նաև օրենքի հիման վրա սեփական աշխատակազմը ձևավորելու, աշխատակիցներին ընտրելու, պաշտոնի նշանակելու, պաշտոնից ազատելու այլ երաշխիքներ սահմանելու իրավասությամբ օժտված լինելը:

Հայաստանի Հանրապետությունում ընտրությունները կազմակերպող մարմինը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն է, որում աշխատանքը քաղաքացիական ծառայություն է: Հաշվի առնելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանադրաիրավական կարգավիճակից բխող առանձնահատկությունները Նախագծերի փաթեթով նախատեսվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում քաղաքացիական ծառայության որոշակի առանձնահատկություններ:

➤ Ընտրական օրենսգիրքը սահմանում է վերահաշվարկ իրականացնելու հերթականություն՝ ըստ որոշակի սուբյեկտների: Ներկայումս առաջին հերթին վերահաշվարկվում են վիճակահանությամբ ընտրված ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, իսկ վերջում վերահաշվարկվում են այն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ ներկայացվել է վերահաշվարկի դիմում: Խնդիրը այն է, որ դիմումների հիման վրա վերահաշվարկի իրականացումը վերջին հերթում կարող է դժգոհությունների և ընտրական գործընթացի նկատմամբ անվստահության մթնոլորտ ստեղծել, հատկապես այն պարագայում, որ վերահաշվարկի իրականացման համար նախատեսված է վերջնաժամկետ: Այս առումով անհրաժեշտություն կա վերահաշվարկի առաջնահերթությունը տրամադրելու վերահաշվարկի դիմումներին, որոնք ներկայացնելու իրավունք ունեն Ընտրական օրենսգրքով նախատեսված սուբյեկտները: Իր հերթին, Ընտրական օրենսգրքում բացակայում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ ընտրական տեղամասում վերահաշվարկ իրականացնելու հնարավորությունը, մինչդեռ վերահաշվարկը

¹² Stu՝ https://kqz-ks.org/wp-content/uploads/2018/01/Rregulllore-01_2017.pdf:

¹³ Stu՝ <https://kqz-ks.org/an/rregullativa-e-brendshme-e-kqz-se/>:

անհրաժեշտ գործիք է ընտրական գործընթացի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար:

➤ Ներկայումս թե՛ ԱԺ ընտրություններում և թե՛ համամասնական ընտրակարգով անցկացվող՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում ընտրական ցուցակները գրանցելու նպատակով կուսակցությունները ներկայացնում են իրենց կանոնադրությունները: Համաձայն Ընտրական օրենսգրքի՝ ընտրական ցուցակի գրանցումը ենթակա է մերժման, եթե կուսակցության կանոնադրությունը չի համապատասխանում «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքին: Նշված դրույթի հիման վրա՝ կուսակցության կանոնադրության՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքին համապատասխանության ստուգման համար պատասխանատու է Կենտրոնական կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Ինդիքը այն է, որ ընդհանուր առմամբ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը իրավասու չէ ստուգելու կուսակցության կանոնադրության՝ օրենքին համապատասխանությունը: Բացի այդ, ԿԸՀ աշխատակազմում այդ նպատակով առանձին ռեսուրսներ առանձնացված չեն, իսկ ընտրությունների շրջանում Կենտրոնական և հատկապես ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից սեղմ ժամկետներում կուսակցությունների կանոնադրությունների ուսումնասիրությունն ու վերլուծությունը դժվար իրագործելի է:

➤ Թե՛ Ազգային ժողովի, և թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների հերթական և արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման ժամկետների հարցում սահմանված է տարբերակված մոտեցում: Մասնավորապես՝ արտահերթ ընտրությունների դեպքում սահմանված են առավել սեղմ ժամկետներ, ինչը հնարավորություն չի տալիս հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում պատշաճ պատրաստվելու ընտրական գործընթացներին:

➤ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանվում է, որ Ազգային ժողովի հերթական ընտրությունների դեպքում կուսակցությունների, ինչպես նաև դաշինքի ընտրական ցուցակում առաջին երեք տասնյակ թեկնածուները հաստատվում են համագումարի կողմից: Այս առումով կարևոր նշանակություն ունի համագումարի անցկացման մասին տեղեկությունների հանրայնացումը, ինչպես նաև համագումարի արձանագրությանը ներկայացվող պահանջների սահմանումը, որը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին հնարավորություն կտա ընտրական ցուցակները գրանցելիս ստուգելու օրենքով սահմանված պահանջների պահպանվածությունը:

Միաժամանակ հարկ է նկատել, որ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՕ-1-Ն սահմանադրական օրենքով (այսուհետ՝ ՀՕ-1-Ն սահմանադրական օրենք) մի շարք առանցքային փոփոխություններ և լրացումներ կատարվեցին «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում, ինչի արդյունքում կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգման լիազորությունը վերապահվեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով): Նույն օրենքի անցումային դրույթների համաձայն՝ այդ փոփոխություններն ուժի մեջ մտան 2022 թվականի հունվարի 1-ից և կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունից փոխանցվեց Հանձնաժողովին:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՕ-5-Ն օրենքի (ուժի մեջ է մտել 2022 թվականի հունվարի 1-ից) 5-րդ հոդվածի համաձայն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը լրացվեց «Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպումը» վերտառությամբ նոր՝ 40.2-ին հոդվածով, իսկ դրա անցումային դրույթներ նախատեսող 7-րդ հոդվածով սահմանվեց, որ մինչև 2022 թվականի հունիսի 1-ը, Հանձնաժողովը, Սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածին և սույն օրենքին համապատասխան պետք է հաստատեր կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները, սահմաներ կուսակցությունների տարեկան հաշվետվության ձևը և դրա լրացման կարգը, ինչպես նաև ընդուներ մի քանի այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Հանձնաժողովի համար նոր գործառույթների սահմանումը պահանջում էր նաև վերը նշված համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի մշակում և 2022 թվականի հունիս ամսից սկսած՝ Հանձնաժողովը, ի թիվ այլնի, ընդունել է «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշումը:

Հաջորդիվ, աուդիտի կազմակերպման նպատակով Հանձնաժողովը մշակել է կուսակցություններից պահանջվող անհրաժեշտ տեղեկությունների ներկայացման ձևաչափը, այն ուղարկել կուսակցություններին՝ առաջարկելով ներկայացնել պահանջվող

նախնական տեղեկությունները: Արդյունքում պարզվել է 2021 թվականի ընթացքում պետական ֆինանսավորում ստացած կուսակցությունների ցանկը՝ դրանք 2022 թվականին պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների ցանկում ներառելու համար: Նշված ցանկի պարզման համար գրություններ են ուղարկվել համապատասխան մարմիններին, ինչպես նաև ուսումնասիրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունից ստացված փաստաթղթերի փաթեթները: Աուդիտորական ծառայությունների պայմանագրերի գների որոշման համար աուդիտորական կազմակերպություններին է ներկայացվել պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների վերաբերելի տվյալները՝ գնային առաջարկներ ներկայացնելու համար: Աուդիտորական կազմակերպություններից ստացված գնային առաջարկների հիման վրա, փորձագետի ներգրավմամբ և սահմանված մեթոդաբանությամբ, որոշվել է աուդիտի ենթակա յուրաքանչյուր կուսակցության տարեկան հաշվետվության աուդիտի՝ աուդիտորական ծառայությունների պայմանագրի արժեքը և Հանձնաժողովի կայքում հրապարակվել է աուդիտորական կազմակերպությունների ընտրության բաց մրցույթ:

Աուդիտորական կազմակերպությունների ընտրության բաց մրցույթի վերաբերյալ հրապարակված հայտարարության վերաբերյալ ՀՀ-ում գործող բոլոր աուդիտորական կազմակերպություններին իրազեկելու համար համապատասխան գրություն է ուղարկվել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ին, իսկ արդեն 2022 թվականի հուլիսի 8-ին տեղի է ունեցել աուդիտորական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկների բացման նիստը: Գնային առաջարկներ են ներկայացվել հետևյալ աուդիտորական կազմակերպությունների կողմից՝

1. «Ֆոր էյ Քնսայթինգ» ՓԲԸ,
2. «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ,
3. «Պի Կա Էֆ Աուդիտ Սերվիս» ՍՊԸ,
4. «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ,
5. «Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ,
6. «Քեյ Էմ Զի Քոնսայթինգ» ՍՊԸ:

Գնահատման փուլի արդյունքում վիճակահանության փուլ են անցել չորս աուդիտորական կազմակերպություններ՝

1. «Ֆոր էյ Քնսայթինգ» ՓԲԸ-ն,
2. «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն,
3. «Թրասթ Աուդիտ» ՍՊԸ-ն,

4. «Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ-ն,

որոնցից յուրաքանչյուրին վերջնական հաղթող ճանաչվելու արդյունքում առաջարկվել է կնքել պայմանագրեր՝ համապատասխան կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտն իրականացնելու համար: «Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց և 11 կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտն իրականացնելը բաժին է ընկել վերջնական հաղթող ճանաչված 2 աուդիտորական կազմակերպություններին՝ «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ին և «Թրասթ Աուդիտ» ՍՊԸ-ին:

2022 թվականի օգոստոսի 1-ին Հանձնաժողովը աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրեր է կնքել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված աուդիտորական կազմակերպությունների հետ: 2022 թվականի օգոստոսի 30-ին և սեպտեմբերի 7-ին «ԹՄ աուդիտ» ՓԲ ընկերությունը Հանձնաժողովին հասցեագրված գրություններով խնդրել է «Բարգավաճ Հայաստան» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի ծառայությունների մատուցման ժամկետները երկարաձգել՝ տեղեկացնելով, որ նշված կուսակցությունների կողմից դեռևս չեն ներկայացվել ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անհրաժեշտ այլ տեղեկություններ: Նշված հանգամանքներով պայմանավորված՝ աուդիտորական եզրակացությունների տրամադրման գործընթացները փաստացի ամբողջությամբ ավարտին է հասցվել 2022 թվականի հոկտեմբերի 15-ին, և Հանձնաժողով է ներկայացվել 11 աուդիտորական եզրակացություն, որից հետո մեկնարկել է պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացը:

Նախագծերի փաթեթով առաջարկվում են նոր կարգավորումներ, որոնց նպատակն է նվազեցնել մի քանի կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման համար միևնույն կազմակերպության հաղթող ճանաչվելու հավանականությունը՝ ապահովելով կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի նպատակով անցկացվող մրցույթի ընթացքում աուդիտորական կազմակերպությունների լայն մասնակցություն:

➤ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում ներկայումս կարգավորված չեն այն դեպքերը, թե ավագանու անդամն, ում պետք է ներկայացնի հրաժարականի մասին իր դիմումը մինչև

ավագանու առաջին նիստի գումարումը կամ համայնքի ղեկավարի/քաղաքապետի բացակայության դեպքում:

➤ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծով կատարվող փոփոխության իրականացումը պայմանավորված է Ընտրական օրենսգրքով ընտրական ցուցակների գրանցման նպատակով ներկայացվող՝ կուսակցության կանոնադրության՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքին համապատասխանության մասին տեղեկանքի տրամադրման պահանջի սահմանմամբ:

➤ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջանում՝ պայմանավորված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմում քաղաքացիական ծառայության առանձնահատկությունները սահմանելու անհրաժեշտությամբ:

➤ Ընտրական օրենսդրության մի շարք դրույթների խախտման համար պատասխանատվություն նախատեսված չէ, ինչը գործնականում դժվարացնում է այդ դրույթների կատարման ապահովումը: Վերոգրյալի հաշվառմամբ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի շրջանակներում սահմանվում են նոր զանցակազմեր և հանցակազմ:

Ինչպես նաև Ընտրական օրենսգրքի՝ 2020-2022 թվականներին իրականացված բարեփոխումների ուսումնասիրությունների, ինչպես նաև 2021 և 2022 թվականներին տեղի ունեցած ընտրությունների ընթացքում ի հայտ են եկել ընտրական համակարգին վերաբերվող օրենսդրությանն առնչվող բազմաթիվ խնդիրներ, որոնք իրենց բնույթով տեխնիկական են:

II. Առաջարկվող կարգավորման բնույթը:

1. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ.

1.1. Ընտրական իրավունքի սկզբունքներ: Սահմանադրության 48-րդ հոդվածով, ինչպես նաև Ընտրական օրենսգրքով սահմանվում են ընտրական իրավունքի սկզբունքները, որոնց համաձայն՝ ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Սկզբունքները՝ որպես իրավական գաղափարներ, կարևոր ուղենիշ են օրենսդրության զարգացման համար: Մյուս կողմից, դրանք կարևոր նշանակություն ունեն կոնֆլիկտային իրավիճակները լուծելու համար: Ուստի՝ փոփոխություններով առաջարկվում է լրացնել ազատ ընտրական իրավունքի սկզբունքը:

1.2. Ընտրությունների նշանակումը և անցկացումը արտակարգ և ռազմական դրության դեպքում: Սահմանադրությունը, ինչպես նաև Ընտրական օրենսգրքն արգելում են ընտրությունների նշանակումն ու անցկացումը արտակարգ և ռազմական դրության պայմաններում: Ներկայումս, Ընտրական օրենսգրքը կարգավորում է միայն ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նշանակման, ինչպես նաև ընտրություններ նշանակելուց հետո անհրաժեշտ գործողությունների իրականացման հետ կապված ժամկետների հարցը: Սակայն, ընտրություններ նշանակվելուց հետո կամ քվեարկության օրվանից հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում կարգավորված չեն ընտրական գործընթացի իրականացման հարցերը: Նախագծով կարգավորվում են ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ընտրությունների անցկացման հետ կապված հարաբերությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռազմական կամ արտակարգ դրությունը էականորեն կարող է փոխել երկրում տիրող իրավիճակը, այդ թվում՝ քաղաքական իրավիճակը, ուստի առաջարկվում է ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում ընտրական գործընթացը դադարեցնել կամ կասեցնելու մոդելները, իսկ ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ ընտրական գործընթացը կամ վերսկսելու կամ կրկին սկսելու վերաբերյալ կարգավորումներ՝ հնարավորություն տալով հաշվի նստել նոր իրողությունների հետ:

1.3. Ընտրությունների հրապարակայնություն, ընտրողների իրազեկում: Նախագծով առաջարկվում է իրականացնել ընտրողների իրազեկում այնպիսի տեղեկությունների մասով, ինչպիսիք են ընտրական հանձնաժողովների կազմերի, գտնվելու վայրերի, աշխատաժամերի, ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, թեկնածուների առաջադրման և գրանցման ժամկետների,

քվեարկության օրվա, տեղի, ժամանակի, քվեարկության և ընտրությունների արդյունքների մասին: Բացի այդ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանրային հեռուստատեսությամբ, հանրային ռադիոյով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակում է ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում՝ նաև ընտրություններ անցկացվող համայնքների ցանկը, ինչպես նաև հրապարակում է տեղեկատվություն՝ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումներ ներկայացնելու ժամկետների, թեկնածուների առաջադրման և գրանցման ժամկետների, ինչպես նաև քվեարկության օրվա մասին, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում՝ նաև ընտրություններ անցկացվող համայնքների ցանկը:

Առաջարկվում է նաև կարգավորել ընտրական տեղամասում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում իրականացված տեսանկարահանված նյութերը հասանելիության, դրանցից պատճեններ ստանալու, արխիվացման հետ կապված հարաբերությունները:

1.4. Այլ համայնքի կամ այլ բնակավայրի հաշվառում ունեցող անձանց ընդգրկումն ընտրական ցուցակներում և քվեարկությունը: Նախագծով առաջարկվում է Ազգային ժողովի ընտրությունների և համամասնական ընտրակարգով անցկացվող տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում քվեարկության օրը իրենց փաստացի գտնվելու վայրում քվեարկության հնարավորություն տալ նաև նույն համայնքի այլ բնակավայրի հաշվառում ունեցող ընտրողներին: Ներկայումս նշված հարցն արդիական է դարձել համայնքների խոշորացման պայմաններում, հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում:

1.5. Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց ընդգրկումն ընտրական ցուցակներում և քվեարկությունը: Նախագծով առաջարկվում է ընտրությունների ժամանակ իրենց տեղամասային կենտրոնում քվեարկելու անհնարինության դեպքում տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողներին հնարավորություն տալ ընդգրկվելու իրենց նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և քվեարկելու իրենց համար մատչելի ընտրական տեղամասում: Միաժամանակ, առաջարկվում է հաշմանդամության հիմքով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումի համար ընդունելի համարել նաև էլեկտրոնային

եղանակով ներկայացված դիմումը, որը կարող է ապահովված լինել ստորագրության՝ դիմողի համար ընդունելի ցանկացած եղանակով, իսկ տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող այլ անձանց էլեկտրոնային դիմումները պետք է ապահովված լինեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հաշմանդամության հիմքով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց էլեկտրոնային դիմումների համար ընդունելի է համարվում ցանկացած եղանակով ստորագրությունը՝ վերջիններիս ընտրական իրավունքի իրականացման հնարավոր խոչընդոտները վերացնելու նպատակով:

1.6. Տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների ընդգրկումն ընտրական ցուցակներում և քվեարկությունը: Հաշվի առնելով քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովներում իրականացվող աշխատանքների ծանրաբեռնվածությունը և, դրանով պայմանավորված, այնտեղ աշխատող անդամների ընտրական իրավունքի իրացմանը չխոչընդոտելու անհրաժեշտությունը, Ընտրական օրենսգիրքը հնարավորություն ընձեռում տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներին Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընդգրկվել այն ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, որտեղ նշանակված են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ: Սակայն, այս կարգավորումը վերաբերում էր միայն Ազգային ժողովի ընտրություններին և միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին, իսկ տեխնիկական սարքը սպասարկող մասնագետների ընտրելու իրավունքի իրացման հարցը մնում է բաց: Նախագծով առաջարկվել է ընտրական տեղամասը փոխելու հնարավորություն ընձեռել ոչ միայն Ազգային ժողովի ընտրությունների, այլ նաև համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ և ոչ միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին, այլև տեխնիկական սարքն սպասարկող մասնագետներին:

1.7. Ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանելու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ տեղեկանքի տրամադրումը: Նախագծով առաջարկվում է Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված՝ ըստ գտնվելու վայրի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին տեղեկանքը փոխարինել ծանուցմամբ: Ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով:

1.8. Էլեկտրոնային եղանակով ընտրողների ցուցակներում ընդգրկվելու դիմում ներկայացնելու հնարավորությունը: Ընտրական օրենսգրքում մինչ այս պահը գործող կարգավորումներում առկա չէ ընտրողների ցուցակներում ընդգրկվելու համար դիմումների ներկայացումը նաև էլեկտրոնային եղանակով: Նախագծով առաջարկվում է բացի թղթային եղանակից, նաև էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու հնարավորությունը, որը հատկապես կարևոր է տեղաշարժման (հենաշարժական) խնդիրներ ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար:

1.9. Ընտրողների ցուցակներին ներկայացվող պահանջները: Նախագծով առաջարկվում է տեղամասի ընտրողների ցուցակում համարակալման շարունակականությամբ ըստ առանձին բաժինների ըստ գտնվելու վայրի ընտրողների ցուցակները ներառել նաև համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ: Տեղամասի ընտրողների ցուցակում համարակալման շարունակականությամբ առանձին բաժնում ներառել նաև նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասում ընդգրկված ընտրողների ցուցակը:

1.10. Ընտրողների ցուցակներն ընտրական հանձնաժողովներին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրելը: Առաջարկվում է լիազոր մարմնի կողմից ընտրողների ցուցակներն ընտրական հանձնաժողովներին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին ներկայացնելու ժամկետներում կատարել փոփոխություններ:

1.11. Ընտրողների ցուցակների մատչելիությունը: Նախագծում առաջարկվում է ընտրողների նախնական ցուցակի տրամադրման ժամկետն ընդհանրացնել բոլոր ընտրությունների համար, և միայն արտահերթ ընտրությունների ժամանակ տրամադրվող նախնական ցուցակի ժամկետը կոնկրետացնել՝ առանձնացնելով միայն Ազգային ժողովի ընտրությունների համար:

Բացի այդ, առաջարկվում է ընտրողների ցուցակների տրամադրման կարգում կատարել փոփոխություններ՝ սահմանելով, որ քվեարկության արդյունքների ամփոփման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո ընտրողների ստորագրված ցուցակները կամ դրանցից քաղվածքներ կարող են տրամադրվել բացառապես ընտրական գործերին առնչվող քրեական վարույթի շրջանակներում, իսկ ընտրողների ստորագրված ցուցակների էլեկտրոնային տարբերակը պահպանվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում՝ քվեարկությունից հետո հինգ տարի ժամկետով:

1.12. Տեղամասային կենտրոնների մատչելիությունը և հաշմանդամություն, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց ընտրական իրավունքի իրականացումը: Նախագծով առաջարկվում է սահմանել տեղամասային կենտրոնների ընտրության որոշակի պահանջներ: Մասնավորապես՝ տեղամասային կենտրոնների ընտրությունը պետք է իրականացվի այնպես, որ հնարավորինս ապահովվի հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց անխոչընդոտ մուտքն ու ելքը, ինչպես նաև տեղաշարժը տեղամասային կենտրոնում:

1.13. Նախընտրական քարոզչությունը համացանցում: Նախագծով առաջարկվում է համացանցում իրականացվող նախընտրական քարոզչության մասում կատարել փոփոխություն՝ հստակեցնելով այն զանգվածային լրատվամիջոցներին, որոնք նախընտրական քարոզչության ժամանակահատվածում անվճար կամ վճարովի քարոզչություն իրականացնելիս թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար պետք է ապահովեն ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:

1.14. Քարոզչական պաստառներ: Ներկայումս Ընտրական օրենսգրքում բացակայում է համայնքի ղեկավարի կողմից քարոզչական պաստառները միայն հատուկ այդ նպատակով առանձնացված վահանակներում փակցնելու պահանջը: Համայնքի ղեկավարը քարոզչական պաստառները փակցնելու համար առանձնացնում է միայն առանձին տեղեր: Արդյունքում դրանք փակցվում են բազմաբնակարան շենքերի, շինությունների պատերին, իսկ ընտրություններից հետո դրանք հաճախ չեն հանվում՝ աղտոտելով և վնասելով շենքերի արտաքին պատերը: Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ համայնքի ղեկավարը, պատասխանատու լինելով չթույլատրված վայրերում տեղակայված պաստառները հանելու համար, ընտրական գործընթացում, որպես կանոն, հանդիսանում է շահագրգիռ անձ, և արդյունքում հակված չէ իրականացնելու օրենքի նշված պահանջը: Մյուս կողմից, համայնքի ղեկավարի կողմից յուրաքանչյուր կուսակցության համար առանձին մակերես առանձնացված չլինելու պատճառով քարոզչական պաստառները հաճախ փակցվում են մեկը մյուսի վրա: Օրենքով կարգավորված չէ նաև լուսադիողային գովազդային վահանակների ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների միջև բաշխելու հարցը: Առաջարկվում է նաև, որ խախտմամբ փակցված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը հանվեն համապատասխան

ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ ոստիկանության օժանդակությամբ:

1.15. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը ի սկզբանե ներդրվել է որպես քաղաքական միավորումների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող հանրային իշխանության մարմին, որի շրջանակներում Ծառայությունը վերահսկողություն էր իրականացնում ինչպես կուսակցությունների ամենօրյա ֆինանսական գործունեության նկատմամբ, այնպես էլ ընտրությունների ու հանրաքվեների ժամանակ քաղաքական դերակատարների կողմից իրենց մասնակցությունն ապահովելու համար ներգրավվող և ծախսվող ռեսուրսների նկատմամբ:

Գործող Ընտրական օրենսգրքում¹⁴ ամրագրված կանոնակարգումների համաձայն, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն իրականացնում է նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողություն (Ընտրական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մաս): Սակայն, նման կանոնակարգումն ուժի մեջ է մտել 2022 թվականի հունվարի 1-ից¹⁵, իսկ մինչ այդ ժամկետը Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ստեղծման պահից սկսած՝ այն իրականացնում էր նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն, որը 2022 թվականի հունվարի 1-ից վերապահվեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Միաժամանակ, հարկ է նկատել, որ նույն՝ 07.05.2021թ. ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի համաձայն¹⁶ Ընտրական օրենսգրքի հիշատակված 29-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

¹⁴«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՕ-202-Ն Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք՝ ընդունված 2016 թվականի մայիսի 25-ին, ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 1-ին: ՀՀՊՏ 2016.05.30/42(1222) Հոդ.456, www.arlis.am

¹⁵ ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-54-Ն Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք՝ ընդունված 2021 թվականի մայիսի 7-ին, ուժի մեջ է մտել 2021 թվականի հունիսի 26-ին: Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, www.arlis.am

¹⁶ 2021 թվականի մայիսի 7-ի ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածն ուժի մեջ է մտնելու 2023 թվականի հունվարի 1-ից:

«Նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սույն օրենսգրքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Վերոգրյալով, ըստ էության, նախատեսվում է ունենալ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեկ միասնական ինստիտուցիոնալ կառույց՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Սակայն, գտնում ենք, որ անհրաժեշտ է տարանջատել կուսակցությունների ամենօրյա ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունից և Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության իրավասությանը վերապահել միայն նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունը: Ուստի, կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության վերաբերյալ գործող Ընտրական օրենսգրքով սահմանված «միջանկյալ» կարգավորումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահված գործառույթների և ընտրական գործընթացի շրջանակներում օրինականության նկատմամբ վերահսկողության արդյունավետության տեսանկյունից՝ ամենաողջամիտ և արդյունավետ լուծումն է: Վերոգրյալով պայմանավորված՝ նախագծով առաջարկվում է գործող կանոնակարգումները պահպանել և դեռ ուժի մեջ չմտած կանոնակարգումն առ այն, որ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն ամբողջությամբ 2025 թվականի հունվարի 1-ից վերապահվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, չեղյալ ճանաչել՝ որպես լավագույն լուծում թողնելով այժմ գործող իրավակարգավորումները, որի համաձայն ամենօրյա ֆինանսական գործունեության և նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունը տարանջատված է և միայն վերջինիս նկատմամբ վերահսկողությունը վերապահված է Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը: Այդ կապակցությամբ առաջարկվում է նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 7-ի ՀՕ-208-Ն դեռ ուժի մեջ չմտած օրենքը և հարակից օրենքներում նախատեսվող համապատասխան դրույթները չեղյալ ճանաչել:

1.16. Կուսակցություններին առնչվող ֆինանսական գործընթացների թափանցիկություն: Քաղաքական կուսակցությունների հետ կապված ֆինանսական տեղեկությունների հրապարակային լինելը թափանցիկության և հաշվետվողականության

խնդիր է շատ ժողովրդավարական երկրներում: Ֆինանսական տեղեկությունների բացահայտումը կարգավորող հատուկ կանոններն ու կանոնակարգերը տարբերվում են ըստ երկրների, սակայն հիմքում ընկած սկզբունքները հիմնականում համընկնում են քաղաքական գործընթացներում թափանցիկության ապահովման տեսանկյունից:

Քաղաքական կուսակցությունների ֆինանսական տեղեկությունները հաճախ համարվում է հանրային տեղեկություններ՝ հիմք ընդունելով ստորև թվարկված նպատակները.

Թափանցիկության և հաշվետվողականության ապահովում. ֆինանսական տեղեկությունների հանրայնացումը ապահովում է քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման և ծախսերի թափանցիկությունը: Քաղաքացիներն իրավունք ունեն իմանալու, թե քաղաքական կուսակցությունները որտեղից են ստանում իրենց միջոցները և ինչպես են նրանք օգտագործում այդ միջոցները: Թափանցիկությունը խթանում է հաշվետվողականությունը՝ թույլ տալով հանրությանը վերահսկել քաղաքական սուբյեկտների ֆինանսական գործունեությունը:

Կոռուպցիայի կանխարգելում. Ֆինանսական տեղեկությունների հրապարակային բացահայտումն օգնում է կանխել կոռուպցիան և անտեղի ազդեցությունը: Այն թույլ է տալիս հանրությանը բացահայտել ցանկացած ոչ պատշաճ ֆինանսական պրակտիկա:

Արդար ընտրությունների կազմակերպում. քաղաքական ֆինանսավորման թափանցիկությունը նպաստում է արդար ընտրությունների անցկացմանը: Երբ ընտրողներին հասանելի են քաղաքական կուսակցությունների ֆինանսական աջակցության մասին տեղեկությունները, նրանք կարող են ավելի տեղեկացված որոշումներ կայացնել ընտրատեղամասերում: Սա նպաստում է քաղաքական մրցակիցների միջև հավասար պայմանների պահպանմանը:

Իրավական համապատասխանության ապահովում. բացահայտման պահանջները հաճախ ծառայում են որպես մեխանիզմ՝ երաշխավորելու, որ քաղաքական կուսակցությունների գործողությունները համապատասխանեն քարոզարշավի ֆինանսավորման հետ կապված օրենքների դրույթներին և կանոնակարգերին: Սա ընտրական մարմիններին հնարավորություն է ընձեռում մշտադիտարկել և ապահովել սահմանված կանոնների պահպանումը:

Հանրային վստահության բարձրացում. ֆինանսական հարցերի հրապարակային լինելը զարգացնում է հանրային վստահությունը ժողովրդավարական գործընթացի նկատմամբ: Երբ քաղաքացիները վստահ են, որ քաղաքական կուսակցությունները թափանցիկ են իրենց

Ֆինանսական գործարքներում, վստահություն է զարգանում նաև ողջ քաղաքական համակարգի նկատմամբ:

Միջազգային ստանդարտների պահպանում. Շատ երկրներ հետևում են միջազգային չափանիշներին և առաջարկություններին, որոնք պաշտպանում են քաղաքական ֆինանսավորման թափանցիկությունը: Այս չափանիշները հաճախ առաջ են մղվում միջազգային կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (GRECO) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ):

Նախագծերի փաթեթով նախատեսվում են մի շարք կարգավորումներ, որոնք ուղղված են ընտրությունների ժամանակահատվածում կուսակցությունների ֆինանսական հաշվետվողականության բարձրացմանը:

1.17. Դիտորդական առաքելություն: Ներկայումս տեղական կազմակերպությունների համար որպես հավատարմագրման նախապայման օրենքով սահմանված է ընտրություններ նշանակելուն նախորդող առնվազն մեկ տարի մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները և ներառված չեն հիմնադրամները, որոնք ևս կարող են գործունեություն ծավալել ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Ուստի, խնդրի լուծման համար անհրաժեշտ է հիմնադրամներին ևս իրավունք վերապահել հավատարմագրվել՝ դիտորդական առաքելություն իրականացնելու համար, ինչն էլ նախագծով առաջարկվում է:

1.18. Ընտրական հանձնաժողովները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմում քաղաքացիական ծառայության առանձնահատկությունները: Վերջին տարիների փորձի հաշվառմամբ կարող ենք արձանագրել, որ գործող կանոնակարգումներով ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պատճառով ընտրական գործընթացը դադարեցվելու դեպքերում ընտրական հանձնաժողովների անդամները իրենց կատարած աշխատանքի համար չեն վարձատրվում՝ անկախ կատարած աշխատանքի ծավալից: Վերոգրյալի հաշվառմամբ առաջարկվում է սահմանել, որ ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պատճառով ընտրական գործընթացը դադարեցվելու դեպքերում ընտրական հանձնաժողովների անդամների՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման համար վարձատրություն իրականացվում է ըստ փաստացի աշխատած օրերի քանակի: Ընտրական հանձնաժողովների անդամներին ընտրությունների կազմակերպման և անցկացման

համար՝ մինչև ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելը վճարված վարձատրության գումարը ենթակա չէ վերադարձման:

Միաժամանակ, Ընտրական օրենսգրքում բացակայում են դրույթներ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում աշխատանքի կամ ծառայության վերաբերյալ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովում աշխատանքի կամ ծառայության վերաբերյալ նորմեր պարունակվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում, որի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է, որ օրենքի գործողությունը տարածվում է, ի թիվս այլոց, նաև անկախ պետական մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա: Կենտրոնական ընտրական հանձնաժողովում մշտական հիմունքներով գործում է աշխատակազմ, որը մշտապես իրականացնում է լայնածավալ աշխատանքներ: Գտնում ենք, որ անհրաժեշտ է սահմանադրական օրենքի մակարդակում ամրագրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անկախության ապահովմանն ուղղված ևս մեկ երաշխիք՝ կառույցում իրականացվող աշխատանքների առանձնահատկությունների հաշվառմամբ աշխատակազմը ձևավորելու կարգը: Այս կապակցությամբ Ընտրական օրենսգիրքն առաջարկվում է համալրել նոր գլխով:

Ընտրական օրենսգիրքը նաև անդրադարձ է կատարում այն անձանց շրջանակին, ովքեր չեն կարող լինել ընտրական հանձնաժողովի անդամ՝ նպատակ հետապնդելով բոլոր այն անձանց, ովքեր սահմանափակումներով նախատեսված չեն, հնարավորություն ընձեռել ներգրավվելու ընտրական գործընթացներում որպես ընտրական հանձնաժողովի անդամ կամ տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետ: Ընտրական հանձնաժողովներում ներգրավված և տեխնիկական սարքավորումները սպասարկող անձանց համար անհամատեղելիության պահանջներով ներկայացվող սահմանափակումները խոչընդոտ չդարձնելուն ուղղված կանոնակարգումները նախատեսվել են նաև «Հանրային ծառայության մասին» օրենքով, սակայն բազմաթիվ այլ օրենքներին անդրադարձ չի կատարվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված խնդրին առնչվող բոլոր օրենքներին անդրադառնալը, ինչպես նաև անհամատեղելիության պահանջներ սահմանող նոր օրենքների շրջանակն ուրվագծելը հնարավոր չէ, ուստի առաջարկվում է Ընտրական օրենսգրքով կանոնակարգել այն անձանց որպես ընտրական հանձնաժողովի անդամ կամ տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետ ներգրավվելու անխոչընդոտ հնարավորությունները, որոնց վրա չեն տարածվում Ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները:

1.19. Վերահաշվարկ: Նախագծով առաջարկվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ նոր կանոնակարգումներ, որոնց շրջանակներում օպտիմալացվում է վերահաշվարկվող տեղամասերի հերթականության որոշումը, վերահաշվարկ կատարելու ժամկետները, վերահաշվարկի պահանջ ներկայացնող սուբյեկտների ցանկը: Այսպես, Առաջարկվում է առաջին հերթին վերահաշվարկել այն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ ներկայացվել է վերահաշվարկի դիմում, իսկ վիճակահանության կարգով վերահաշվարկն իրականացնել վերջին՝ երրորդ հերթում: Նախատեսվում է, որ վերահաշվարկ կարող է իրականացվել նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ:

1.20. Ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Նախագծով սահմանվում է, որ ընտրություններին մասնակցելու նպատակով կուսակցությունները ներկայացնում են տեղեկանք՝ կուսակցության կանոնադրության՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքին համապատասխանության մասին: Նախատեսվում է, որ տեղեկանքը տրամադրելու է Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը: Կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը ենթակա կլինի մերժման համապատասխան տեղեկանքի բացակայության դեպքում:

1.21. Հերթական և արտահերթ ընտրությունների ժամկետները: Նախատեսվում է միասնականացնել տեղական ինքնակառավարման մարմինների հերթական և արտահերթ ընտրությունների ժամկետները:

1.22. Նախագծով առաջարկվում են որոշ եզրութաբանական փոփոխություններ և տեխնիկական լուծումներ: Օրինակ, «տարածքային ընտրական հանձնաժողով»-ը վերանվանվում է «ընտրատարածքային ընտրական հանձնաժողով»-ի, «նվիրատվություն» եզրույթը փոխարինվում է «մուծում» եզրույթով, մեկ թեկնածու կամ կուսակցություն (դաշինք) քվեարկվելու դեպքում «դեմ եմ» քվեաթերթիկ տպագրելու անհրաժեշտություն և այլն:

1.23. Նախաքվեարկության գործիքն առաջարկվել է Ընտրական օրենսգրքում որպես Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ պարզ համամասնական ընտրակարգի սահմանման պարագայում՝ փորձ կատարելով որոշակիորեն մեղմել բաց ընտրական ցուցակներ չունենալու մտահոգությունը: Ակնհայտ է, որ մասնակցային եղանակով ընտրական ցուցակ ձևավորելու այս եղանակը չէր արդարացնելու սպասելիքները, հաշվի առնելով գործիքի և նախաքվեարկության արդյունքների կիրառումը կամավոր է և չի

փոխարինում Ազգային Ժողովի ընտրություններում ընտրական ցուցակի հաստատման վերաբերյալ կարգավորումներին: 2021 թվականի Ազգային ժողովի և 2021-2023 թվականների տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ որևէ կուսակցություն կամ դաշինք քայլեր չի ձեռնարկել օգտագործելու նախաքվեարկության գործիքը՝ կուսակցության կամ դաշինքի նախընտրական ցուցակի մասնակցային ձևավորման համար:

Ավելին, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքը սահմանում է կուսակցության համագումարի և կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի լիազորությունները կուսակցության ընտրական ցուցակ կազմելու հարցում: Ընդ որում, նշվում է, որ ցուցակները պետք է համապատասխանեն «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով ընտրական ցուցակներին ներկայացվող պահանջներին: Նախաքվեարկության գործիքի կիրառման դեպքում անգամ կուսակցությունը կաշկանդված չէ իր հայեցողությամբ, հաշվի չառնելով ցուցակի մասնակցային ձևավորումը, կազմել ցուցակ և ներկայացնել այն գրանցման համար: Ավելին, կուսակցությունները սահմանափակված չեն իրենց հայեցողությամբ իրենց կողմից առաջարկվող ցանկացած հարթակում իրականացնելու նախաքվեարկություն իրենց ընտրած ձևաչափով: Նման հնարավորությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում ընձեռելը, մի կողմից, սահմանափակում է կուսակցություններին տարբեր ձևաչափեր կիրառելու տեսանկյունից, մյուս կողմից, վտանգում են ԿԸՀ որպես ապաքաղաքական անկախ մարմին հանդես գալը, քանի որ կա վտանգ ակամայից ներքաշվելու ներկուսակցական պայքարի մեջ, որևէ առնչություն ունենալու դրան: Ուստի, նախաքվեարկության հնարավորություն ընձեռելու հնարավորությունը կարող է նախատեսվել յուրաքանչյուր կուսակցության կանոնադրությամբ՝ ընտրական ցուցակներ ձևավորելու կարգ սահմանելիս, իսկ ԿԸՀ կայքում նախաքվեարկության գործիքի նախատեսումը անհրաժեշտ է բացառել:

1.24. Նախագծով նախատեսվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ ընտրական հանձնաժողովների որոշումների վերանայման վերաբերյալ կարգավորում, որի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերահսկողության կարգով և իր նախաձեռնությամբ իրավունք ունի վերանայելու ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը դրա կայացումից հետո վեց ամսվա ընթացքում, բացառությամբ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական

ցուցակները (դրանցում ընդգրկված թեկնածուներին), թեկնածուներին գրանցելու, գրանցումը մերժելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումների: Նախագծով առաջարկվող կարգավորման նպատակն է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար նախատեսել որոշակի ժամկետներով հստակեցված լիազորություն, որի շրջանակներում հնարավոր ոչ իրավաչափ որոշումները կվերանայվեն:

2. «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ: «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանվում է, որ Ազգային ժողովի հերթական ընտրությունների դեպքում կուսակցությունների, ինչպես նաև դաշինքի ընտրական ցուցակում առաջին երեք տասնյակ թեկնածուները հաստատվում են համագումարի կողմից: Այս առումով կարևոր նշանակություն ունի համագումարի անցկացման մասին տեղեկությունների հանրայնացումը, ինչպես նաև համագումարի արձանագրությանը ներկայացվող պահանջների սահմանումը, որը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին հնարավորություն կտա ընտրական ցուցակները գրանցելիս ստուգելու օրենքով սահմանված պահանջների պահպանվածությունը: Ուստի, նախագծով առաջարկվել կարգավորել նշված խնդիրները: Նախագծով նախատեսվում է, որ կուսակցության հերթական և արտահերթ համագումարի անցկացման ժամանակի և վայրի, ինչպես նաև օրակարգի մասին տեղեկությունները հրապարակվում են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ <http://www.azdarar.am>՝ համագումարի անցկացման օրվանից առնվազն 10 օր առաջ: Նախագծով սահմանվում են նաև համագումարի արձանագրության կազմմանը ներկայացվող պահանջները:

Նախագծով «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում նաև կատարվում են փոփոխություններ, որոնք բխում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում կուսակցությունների նախընտրական հիմնադրամներին կատարվող մուծումների դեպքում ֆիզիկական անձանց համար նախատեսվող սահմանափակման տրամաբանությունից:

Միաժամանակ՝ Նախագծերի փաթեթում ներառված նախագծերով («Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ) առաջարկվող կարգավորումների

նպատակն է նվազեցնել մի քանի կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման համար միևնույն կազմակերպության հաղթող ճանաչվելու հավանականությունը՝ ապահովելով կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի նպատակով անցկացվող մրցույթի ընթացքում աուդիտորական կազմակերպությունների լայն մասնակցություն: Մասնավորապես առաջարկվում է հետևյալը . գործող կարգավորումներով աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով բաց մրցույթն անցկացվում է կուսակցության կողմից Սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված անհրաժեշտ տեղեկությունները Հանձնաժողովին տրամադրելուց հետո, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը: 2022 թվականին նշված տեղեկությունները Հանձնաժողովին տրամադրելու գործընթացում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ ոչ բոլոր կուսակցություններն են ներկայացրել անհրաժեշտ տեղեկությունները, ներկայացված տեղեկություններում սխալ հաշվարկների արդյունքում աուդիտի է ենթարկվել կուսակցություն, որը ենթակա չէր աուդիտի, ինչպես նաև եղել են կուսակցություններ, որոնց ներկայացրած՝ նախնական տեղեկությունների տվյալները չեն համապատասխանել հետազայում հրապարակված տարեկան հաշվետվության վերաբերելի տվյալներին:

Վերը նշված խնդիրների լուծման համար առաջարկվում է սահմանել, որ աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով բաց մրցույթն անցկացվում է կուսակցության տարեկան հաշվետվության ներկայացումից հետո՝ մեկամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 30-ը, իսկ աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, նրանց ներկայացվող պահանջները և աուդիտի իրականացման շրջանակները սահմանում է Հանձնաժողովը:

Նման կարգավորումների պայմաններում նախ՝ վերանում է նախնական տեղեկությունների չներկայացման կամ թերի, սխալ տեղեկություններ ներկայացնելու հետ կապված հետագա խնդիրները, աուդիտորական կազմակերպությունների ընտրության ժամանակ աուդիտի ենթակա կուսակցությունների տարեկան հաշվետվություններն արդեն իսկ պատրաստ են լինում՝ բացառելով աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի ժամկետի հնարավոր ձգձգումները:

Ինչ վերաբերում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացմանը, ապա գործող կարգավորումներով կուսակցությունները պարտավոր են յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել իրենց տարեկան

հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը, իսկ հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Հանձնաժողով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2022 թվականի ընթացքում կուսակցությունների կողմից որպես հրապարակման փաստ Հանձնաժողով են ներկայացվել հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքից գեներացված թվեր պարունակող փաստաթուղթ, որով հնարավոր չի լինում ստուգել՝ արդյո՞ք հաշվետվությունը հրապարակված է, թե՛ ոչ, իսկ որոնման գործիքի միջոցով հրապարակված լինելու փաստի ստուգումը նույնիսկ Հանձնաժողովի համար է խնդրահարույց, քանի որ, ի թիվս այլ խնդիրների, չի կիրառվում վերնագրերի հրապարակման միասնական մոտեցում, միաժամանակ կուսակցությունների տարեկան հաշվետվություններն իրենց մեջ պարունակում են նաև անձնական տվյալներ, որոնք ենթակա չեն հրապարակման, և որոնց ցանկը հաստատել է Հանձնաժողովը, իսկ azdarar.am կայքում հրապարակման ներկայացնելիս ստուգում չի իրականացվում, արդյո՞ք հաշվետվությունը ներկայացվել է ԿԿՀ-ի սահմանած ձևաչափով և արդյո՞ք դրանում ներառված չեն հրապարակման ոչ ենթակա անձնական տվյալները, միաժամանակ, 2021 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակման փաստը ստուգելիս Հանձնաժողովը պարզել է, որ կան կուսակցությունների տարեկան հաշվետվություններ, որոնք ներկայացվել և հրապարակվել են անձնական տվյալներով, ուստի նախագծով առաջարկվում է, որ կուսակցություններն իրենց տարեկան հաշվետվությունները ներկայացնեն Հանձնաժողով, իսկ վերջինս էլ ապահովի իր պաշտոնական կայքում դրանց հրապարակումը՝ բացառելով անձնական տվյալների հրապարակումը:

Նախագծերով սահմանվում է, որ կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ից ոչ ուշ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացել տարեկան հաշվետվությունը, որը հրապարակվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պաշտոնական՝ www.cpcarmenia.am կայքում՝ առանձին բաժնում տեղադրելու միջոցով: Աուդիտի ենթակա կուսակցության դեպքում տարեկան հաշվետվությունը և աուդիտորական եզրակացությունը հրապարակվում են աուդիտորական եզրակացությունը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նման կարգավորումը լուծում է առաջացած խնդիրները, այդ թվում՝ ազատում կուսակցություններին նույն հաշվետվությունը 2 տարբեր մարմինների ներկայացնելու հավելյալ պարտականությունից, միաժամանակ, առաջիկայում հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային նոր համակարգում նախատեսվում է ապահովել նաև կուսակցությունների տարեկան հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման բաժին, ուստի նպատակահարմար է տարեկան հաշվետվությունների ներկայացման և հրապարակման համար կիրառել հենց Հանձնաժողովի պաշտոնական կայքը:

3. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծեր:

Ավագանու անդամի կողմից հրաժարականի դիմում ներկայացնելու ընթացակարգերի կապակցությամբ ներկայումս օրենքով կարգավորված չեն այն դեպքերը, թե ավագանու անդամն ում պետք է ներկայացնի հրաժարականի մասին իր դիմումը մինչև ավագանու առաջին նիստի գումարումը կամ համայնքի ղեկավարի/քաղաքապետի բացակայության դեպքում: Նախագծերով առաջարկվում է նախատեսել, որ համայնքի ղեկավարի/քաղաքապետի պաշտոնը թափուր լինելու դեպքում նման դիմում կարող է ներկայացվել համայնքի ղեկավարի/քաղաքապետի պաշտոնակատարին, իսկ եթե պաշտոնակատար նշանակված չէ, ապա համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին: Միաժամանակ, գործնականում առկա է իրավիճակ, երբ համայնքի ավագանի ձևավորվել է, մանդատները տրամադրվել են, սակայն ավագանու անդամները դեռ չեն ստանձնել իրենց պաշտոնները, քանի որ նախորդ գումարման ավագանու լիազորությունների ժամկետը դեռ չի լրացել: Նախագծով առաջարկվում է մինչև նորընտիր ավագանու առաջին նիստի գումարումն ընկած ժամանակահատվածում նորընտիր ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը ներկայացնի համապատասխանաբար Կենտրոնական կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Նաև առաջարկվում է կանոնակարգել, որ եթե ավագանու անդամը դիմումն անձամբ ներկայացնելու հնարավորություն չունի, ապա հրաժարականի դիմումը ներկայացնում է խմբակցության ղեկավարը կամ ավագանու անդամի ներկայացուցիչը:

4. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ:

4.1. Ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նախատեսվում է, որ ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) և թեկնածուները գրանցման համար նախատեսված ժամկետի ավարտից հետո համապատասխան ընտրական հանձնաժողով են ներկայացնում իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր: Ներկայումս թեկնածուների և կուսակցությունների կողմից իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագրի ներկայացումը ապահովված չէ իրավական պատասխանատվության միջոցներով, որը վերը նշված սուբյեկտներին հնարավորություն է տալիս առանց բացասական հետևանքների անտեսելու հայտարարագրի ներկայացնելու օրենքի պահանջը: Ուստի, առաջարկվում է վարչական պատասխանատվություն նախատեսել կուսակցության (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցության) և ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի կողմից Ընտրական օրենսգրքով սահմանված՝ գույքի և եկամուտների մասին հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու համար: Այլապես, հնարավորություն չկա ապահովելու Ընտրական օրենսգրքի հիշատակված պահանջը:

4.2. Ընտրական օրենսգրքով համայնքի ղեկավարը պարտականություն է կրում տեղամասային կենտրոնը ընտրելիս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացնել տեղամասային կենտրոնի և քվեարկության սենյակի բնութագրերը, որոնք պետք է համապատասխանեն Ընտրական օրենսգրքի պահանջներին: Վերջինս պարտականություն է կրում Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան՝ քվեարկության սենյակի կահավորման համար: Սակայն նշված պարտականությունների չկատարման համար նախատեսված չէ որևէ պատասխանատվություն: Դրա ապահովման անհարժեշտությունը պայմանավորված է, ի թիվս այնի, նաև այն հանգամանքով, որ ԿԸՀ կայքում պետք է տեղադրվի տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց համար մատչելի ընտրական տեղամասի ցանկը, որպեսզի տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձինք հնարավորություն ունենան նախօրոք ընտրելու մատչելի տեղամաս և դիմելու լիազոր մարմնին՝ իրենց անունն ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանելի և մատչելի տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկելու պահանջով: Ուստի, համայնքի ղեկավարը սույն պարտականության կատարմանը պետք է շատ ավելի պատասխանատու վերաբերվի: Ուստի, նշված պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար բացասական հետևանքներ սահմանելու անհրաժեշտությունն ակնհայտ է:

4.3. Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ խախտմամբ տեղադրված քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը պետք է հանվեն: Միաժամանակ, որևէ պատասխանատվություն այն անձանց համար, ովքեր խախտմամբ տեղադրված են քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը, որևէ բացասական հետևանք նախատեսված չէ: Նման պրակտիկան լայնածավալ տարածում ունի: Վերոգրյալի հաշվառմամբ առաջարկվում է սահմանել օրենքով սահմանված կարգի խախտմամբ կամ օրենքով չթույլատրված վայրում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար վարչական պատասխանատվություն:

4.4. Նախագծով առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում 223-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներում կատարել փոփոխություններ, որոնք, նախ, պայմանավորված են վերը նշված նոր զանցակազմերի սահմանմամբ, և ուղղված են ընտրական օրենսդրության խախտումների համար վարչական պատասխանատվության ենթարկելու գործերով դատարան դիմելու ընտրական հանձնաժողովների լիազորության իրացման կապակցությամբ արդյունավետ կառուցակարգեր սահմանելու անհրաժեշտությամբ: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված՝ ընտրական օրենսդրության իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ դատարան պետք է դիմի իրավասու ընտրական հանձնաժողովը և վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը պետք է կազմի նույնպես իրավասու ընտրական հանձնաժողովը: Սակայն կոլեգիալ մարմնի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով պահանջվող արձանագրության կազմումը դժվար է պատկերացնել, ինչով պայմանավորված ընտրական հանձնաժողովները փաստացի զրկված են եղել նշված գործերով դատարան հայց ներկայացնելու հնարավորությունից: Ուստի, հաշվի առնելով ընտրական գործընթացների առանձնահատկությունները՝ առաջարկվում է արձանագրության կազմման լիազորությունը վերապահել հանձնաժողովի նիստն արձանագրողին կամ հանձնաժողովի այն անդամին, ում հայտնի է դարձել իրավախախտման մասին: Նաև հնարավորություն է նախատեսվում կազմել արձանագրություն իրավախախտման սուբյեկտի բացակայությամբ, եթե նա նիստի մասին պատշաճ ծանուցվել է, սակայն չի ներկայացել: Նման իրավական կարգավորումների բացակայության պայմաններում ընտրական հանձնաժողովները հնարավորություն չեն ունենում պատշաճ ժամկետներում դատարան հայց ներկայացնել և կայացված դատական ակտի հաշվառմամբ ամփոփել ընտրությունների արդյունքները,

ամփոփման վերաբերյալ որոշման հիմքում դնելով միայն ընտրական հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքներով կայացված վարչական ակտը:

5. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող նախագիծ: Օրենքներում նախատեսվող փոփոխությունը պայմանավորված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմում քաղաքացիական ծառայության առանձնահատկությունները սահմանելու անհրաժեշտությամբ: Նշված փոփոխությունները հնարավորություն կտան ապահովելու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից իրեն վերապահված գործառույթների արդյունավետ իրականացումը:

6. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը: Նշված օրենքներում լրացումների իրականացումը պայմանավորված է Ընտրական օրենսգրքով ընտրական ցուցակների գրանցման նպատակով ներկայացվող՝ կուսակցության կանոնադրության՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքին համապատասխանության մասին տեղեկանքի տրամադրման պահանջի սահմանմամբ: Գործող կանոնակարգումների շրջանակներում կուսակցության կանոնադրության՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքին համապատասխանության հարցը որոշում է կուսակցությանը գրանցող ընտրական հանձնաժողովը, և կուսակցության կանոնադրության՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքին անհամապատասխանության դեպքում պետք է մերժի կուսակցության գրանցումը: Սակայն, նման կարգավորումը տրամաբանական չէ, քանի որ ընտրական հանձնաժողովներն այդ դեպքում կիրականացնեն իրենց իրավասության շրջանակներից դուրս լիազորություն: Ավելին, որևէ հստակ կառուցակարգ դրա համար նախատեսված չէ, և ընտրական հանձնաժողովներն ապահովված չեն համապատասխան տեղեկատվական, մարդկային և այլ ռեսուրսներով նման լիազորություններ իրականացնելու համար: Ընտրական օրենսգրքի փոփոխություններով առաջարկվող կանոնակարգման շրջանակներում առաջարկվում է սահմանել, որ կուսակցությունները ընտրություններին մասնակցելու համար առաջադրման փաստաթղթերը ներկայացնելիս պետք է ներկայացնեն նաև կուսակցության կանոնադրության՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքին համապատասխանության մասին տեղեկանք: Ուստի, անհրաժեշտ է

«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում սահմանել նշված տեղեկանքը տրամադրելու վերաբերյալ լիազորությունը, ինչպես նաև սահմանել նշված տեղեկանքի տրամադրման կարգը:

7. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է ընտրություններին մասնակցող թեկնածուին ինքնաբացարկ ներկայացնելուն կամ մանդատից հրաժարվելուն հարկադրելու համար սահմանել քրեական պատասխանատվություն: Քրեական օրենսգրքում նոր հոդվածի ավելացումը պայմանավորված է ընտրություններին մասնակցող թեկնածուներին ինքնաբացարկ ներկայացնելուն կամ մանդատից հրաժարվելուն հարկադրելու դեպքերի կանխարգելմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործնականում նման դրսևորումներ բազմիցս արձանագրվել են: Միաժամանակ Նախագծով քրեական օրենսգրքում կիրառվող հասկացությունները համապատասխանեցվում են Ընտրական օրենսգրքում կատարվող փոփոխություններին:

8. ««Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և ««Տեղական հանրաքվեի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծերի վերաբերյալ:

Նախագծով առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են Ընտրական օրենսգրքում կատարվող եզրութաբանական փոփոխություններով (տարածքային ընտրական հանձնաժողովները վերանվանվել են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների, «նվիրատվություն» եզրույթը փոխարինվել է «մուծում» եզրույթով): Միաժամանակ, նախընտրական քարոզչության համար ծախսվող առավելագույն գումարի չափը հանրաքվեի շրջանակներում առաջարկվում է սահմանել նույն սահմանաչափի շրջանակներում, որը կիրառվում է Ազգայի ժողովի ընտրությունների ժամանակ՝ նվազագույն աշխատավարձի 800 000-ապատիկը՝ գործող 100 000-ապատիկի փոխարեն: Նշված մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ հանրաքվեն նույնպես համապետական քվեարկություն է, և նման պայմաններում հասկանալի չէ նախընտրական քարոզչությանը հատկացվող գումարի տարբեր սահմանաչափել նախատեսելը:

«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների դահլիճները քարոզչության կողմերին կարող են տրամադրվել միայն ժամը 18:00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին և միայն այն դեպքերում, եթե տվյալ համայնքում (Երևանի վարչական շրջանում) գոյություն չունեն քարոզչության անցկացման համար համապատասխան այլ դահլիճներ: Հաշվի առնելով վերջին տարիներին իրականացված լայնածավալ խոշորացումները՝ նշված ձևակերպմամբ սույն դրույթը չի ծառայելու այն նպատակին, որի համար սահմանվել է: Գործնականում կստացվի իրավիճակ, երբ բազմաբնակավայր համայնքի միայն մեկ բնակավայրում առկա լինի այլ դահլիճ և նույն համայնքի որևէ բնակավայրում հանրակրթական ուսումնական հաստատությունների դահլիճները չեն կարող տրամադրվել: Վերոգրյալի հաշվառմամբ՝ նախագծով առաջարկվում է «համայնք» եզրույթի փոխարեն կիրառել «բնակավայր» եզրույթը:

9. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը չեղյալ ճանաչելու մասին» «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական հանրաքվեի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 7-ի ՀՕ-208-Ն օրենքը պետք է ուժի մեջ մտներ 2025 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված օրենքով 2025 թվականի հունվարի 1-ից թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների՝ իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ վերահսկողության լիազորությունը վերապահվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, իսկ Ընտրական օրենսգրքի փոփոխություններով դրանք վերապահվում են վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը,

ապա Ընտրական օրենսգրքի փոփոխությունների ընդունման դեպքում այլևս նպատակահարմար չի լինի սույն՝ ընդունված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած օրենքի կիրառումը: Ուստի, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38.1-րդ հոդվածով, որի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտը չեղյալ է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտով, եթե այլևս նպատակահարմար չէ ընդունված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ակտի կիրառումը», առաջարկվում է ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 7-ի ՀՕ-208-Ն օրենքը և հարակից օրենքներում առկա փոխկապակցված դրույթները չեղյալ ճանաչել:

III. Նախագծերի փաթեթի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագծերի փաթեթի մշակմանը մասնակցել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Արդարադատության նախարարության ներկայացուցիչները՝ Ընտրական համակարգերի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի (IFES Armenia) տեխնիկական աջակցությամբ: Նախագծերի փաթեթը մշակելիս հաշվի են առնվել նաև Վենետիկի հանձնաժողովի, քաղաքացիական հասարակության, մասնավորապես՝ դիտորդական առաքելությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների կարծիքները և դիտարկումները:

IV. Ակնկալվող արդյունքը

Փաթեթի ընդունմամբ հնարավոր կլինի կարգավորել նախորդ ընտրությունների ժամանակ ի հայտ եկած խնդիրները, նպաստել ընտրական համակարգի շարունակական կատարելագործմանը, Հայաստանում ձևավորված ժողովրդավարության ամրապնդմանն ու բարելավմանը: Նախագծերի սույն փաթեթի ընդունումը կնպաստի ընտրությունների պատշաճ կազմակերպման հնարավորությունների ստեղծմանը, նախընտրական քարոզչության ֆինանսական թափանցիկության ապահովմանը և դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողությանը, ընտրական գործընթացներին հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև հենաշարժական (տեղաշարժման) խնդիր ունեցող անձանց մասնակցության մատչելիությանը: